ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

20 ապրիլի 2020 թվականի N 71 - Ա

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով, 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 16-րդ հոդվածի 4-րդ մասով, 17-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 441-Ն որոշման 1-ին կետով սահմանված հավելվածի 2-րդ և 7-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հուլիսի 10-ի N 792-Ն որոշման 1-ին կետով սահմանված սահմանված հավելվածի 12-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Մարգարիտա Ռեմիկի Պողոսյանի դիմումը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Մարգարիտա Ռեմիկի Պողոսյանին 2020 թվականի ապրիլի 20-ից՝ 12 ամիս փորձաշրջանով նշանակել Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) գործերի կառավարման և գնումների կազմակերպման բաժնի պետի (ծածկագիր՝ 52-25.1-Ղ4-1) պաշտոնում:

2. Փորձաշրջանը համակարգող նշանակել Ծառայության հաշվապահական հաշվառման բաժնի պետ-գլխավոր հաշվապահ (ծածկագիր՝ 52-25.2-Ղ4-1) Աստղիկ Մկրտչյանին:

3. Ծառայության գործերի կառավարման և գնումների կազմակերպման բաժնի պետի (ծածկագիր՝ 52-25.1-Ղ4-1) ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնող Մարգարիտա Ռեմիկի Պողոսյանի հետ 2019 թվականի մայիսի 17-ին կնքված N 13 ժամկետային աշխատանքային պայմանագիրը 2020 թվականի ապրիլի 20-ից համարել լուծված:

4. Աշխատավարձը սահմանել համաձայն «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ
ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Recoverable Signature

X

ԱՆԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Signed by: BAGHDASARYAN ANI 7504910546